11 ՍԵՊՏԵՄԲԵՐ· 1848 ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ· ԹԻՒ 11—116 ՀԷՎՎԱԼ· ՀԱՅ ԹՎ. ՌԷ· ՀԱՅԱՍՏԱՆ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱՕԳՈՒՅՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Տարեկան գին կանխիկ Ղուռուշ 100։ Վեցամսեայ գին Ղուռուշ 52 1/2։ Եռամսեայ գին 26 3/4։
Հինգ ստորագրուոց գտնոցին մէկ օրինակ իրեն ձրի դիտի տրուի։
Այս Լրագիրը ամէն շաբաթի օրերը կը հրատարակուի։

Պօշիսէն դուրս գացած Լրագիրներուն փոսթայի ծախքը առնոցին վրայ է։
Իր շանին համար շուր մը հրատարակէ ուզոցը դիտի վճարէ տոցին 40 փարայ։
Նորատիպ գրոց ծանուցումը ձրի է։ Դուրսէն եկած նամակներուն փոսթայի ծախքը իրկոցը դիտի վճարէ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊՕԼԻՍ 11 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Մայրաքաղաքիս մէջ ստէպ ստէպ պատահած մեծամեծ հրդեհներուն առջեւը առնելու համար կառավարութիւնը կ'արգիլէ ասկէ եառեւ փայտէ շէնքեր շինուիլը. հապա ամէն շէնք թէ տուն, թէ գործարան, թէ մաղազա և թէ խանութ պիտի շինուին կամ քարէ կամ աղիւսէ (Թուղլայէ) կամ Պ. Նիքոյին հնարած տեսակ մը աղիւսէ (Քէրպիճէ)։ Նաեւ հրդեհներուն տուած անգարմանելի վնասներէն գլխովին մայրաքաղաքս ազատ պահուելուն ուրիշ հնարքներն ալ միշտ խորհելու ու գործի դնելու համար յատուկ ժողովք մը պիտի հաստատէ կառավարութիւը ժողովականներուն մէկ մասը տաճկէ և մէկ մասը իւր հպատակներէն և մէկ կէսն ալ հոս տեղի եւրոպացի բնակիչներէն, բայց այս եակիններըը դեսպանները պիտի ընտրեն և անոնց համար եւրաշխաւոր պիտի ըլլան բարձրագոյն դուռանը։

Դերագոյն ատեանը այս բաներուն վրայով միշտ կը խորհի և թէ որ կատարելու ըլլայ երեւելի մեծագործութիւն մը պիտի ըրած ըլլայ։

— Աբքունի եկամտից տեսուչ վսեմափայլ Նաֆիս փաշան տէրութեան հին ու աշխատաւոր նախարարներէն մէկն ըլլալով, մանաւանդ իւր պաշտօնին մէջ միշտ մեծ հաւատարմութիւն ու խոհեմութիւն ցուցնելուն վերհափառ Աբքայն այս շաբթու իրրեւ գերագոյն պատուոյ նշան իւր ծանրագին կենդանագիրը շնորհեց։

— Աբքունի բարձր հրամանաւ նախկին էֆոֆ նաղրի Հասիպ փաշան Ռիստէյի կառավարիչ անուանեցաւ։

— Վսեմափայլ Սիւլէյման փաշան որ բարձրագոյն դուռը հարկաւոր գործով մը Նշանլու Պուքրէշլու կողմերը խաւրեց, երեքշաբթի օրը Խալասի շոգենաւով Մայրաքաղաքս հասաւ։

— Պէյօղլուի բնակիչները աղերսագիր տուեր են Վեհափառ Աբքային որ կրկին թոյլտուութիւն ընէ փայտէ շէնքեր ալ շինուելու։ Յիրաւի աչքի առջեւ եղած փոքրիկ շահը գալիք մեծամեծ վնասները չի կրնար դարմանել և այս է շատերուն աղքատութեան գլխաւոր պատճառը, բայց և այնպէս աղերսողներն ալ քիչ մը իրաւունք ունին. ասնոր համար որ՝ քարուկիրէ շինելու կարողութիւն չունենալով պիտի պարտաւորին մեծ աշխատանքներով Պէյօղլուի պէս երեւելի արուարձանի մը մէջ ձեռք բերած ստացուածքէն զրկուիլ։ Ասոնք մենք ինչպէս կը խորհիմք նէ՝ անտարակոյս Բարձրագոյն դուռն ալ կը խորհի. ուստի կը յուսամք որ անանկ մէկ միջոց մը կը գտնայ որ բնաւ մէկուն վնաս չըլլալով միշտ իւր առաջին խորհածը գլուխ կ'ելլայ։

— Մաճառի սրուֆերը ոտք ելլալուն, հիմա սրուֆի իշխանութեան մէջի եղած բնակիչներն ալ զէնք առնել կ'ուզեն մաճառներուն դէմ. այն մտօք որ՝ երթան եղբայրներին ազատեն անոնց ձեռքէն ու իրենց իշխանութեանը խառնեն։ Բայց իշխանէն մէկ տարօրինակ բան մը կը խնդրեն, կ'ըսեն որ՝ զինուորական կառավարութիւնը միայն իրենցմէ կախում ունենայ. այս բանը բնաւ մէկ տեղ մը եղած չէ. ամէն տեղ կառավարութենէն կախում կ'ունենայ, ապա թէ ոչ ապստամբութի կը համարուի։

— Բատ լատինացւոց օգոստոս 23ով Վիեննայէն եկած գիրերը անանկ կը պատմեն որ, գործաւորները ոտք ելեր են հոն և կը պօռան եղեր որ կամ հաց կամ մահ։ Քաղաքապահ և ազգային զօրքը միանալով ասոնց առջեւը հաղիւ կրցեր առեր են։ Նրեկուան Վիեննայի փոսթայով եկած գրերէն տեղեկացանք որ դեռ գործաւորները բոլորովին չեն դադրեր։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՂԴԻԱ։ Մայիսի 15 ին. և յունիսի 23. 24, 25 և 26 օրերը Փարիզու մէջ եղած խռովութիւններուն պատճառը և պարագայները և գլխաւորները գտնելու և հասկընալու համար Ֆռանսայի հասարակապետութեան ատեանը մասնաւոր մէկ գործակալաց ժողովք մը որոշեց, որ քննչաց կամ քննութեան ժողով ըսուեցաւ։

Այս ժողովին պատմիչը իրեն գիտցածը և ստուգելը կրցածը կառավարութեան ազգային ատեանին մէջ կարդաց նէ՝ շատ աղմուկներ եղան. որովհետեւ երեւելի և յարգի մարդոց վրայ ալ ապստամբութեան գործակից և խորհրդատու ըլլալու կասկածներ կ'ելլէր։ Ասանկներն էին Պ. Լ ըարիւ—Ռոլէն, Պ. Լ ուի Պլան, Պ. Թրոմպիէր, և այլն. և քանի մը ալ ազգային պահապան զօրաց զօրապետներ և հրամանատարներ։

Տեղեկութիւնները կարդացուած ատենը տեղ տեղ ստուգ է ըսին. և քանի մը լրագիրներ և օրագիրներ որ ֆոմի-նիոդներու դրութեանը պաշտպան էին, քննիչներուն համար ստախօս և զրպարտիչ են ըսելու սկսած էին. երբ որ կառավարութեան ատեանը հրաման ըրաւ որ այն տեղեկութիւնները որ տեղէն առնուած են, և հաստատութեան և ապացոյցի համար ինչ գրութիւններ ձեռք ինկած են նէ՝ անոնք ամէնը մէկէն ապուին և առանձնաներուն և ուրիշներուն տրուին։ Այս վճռոյս արդեւք դնել ուզողներ եղան, բայց վճիռը քալեց։ Օր որոշուեցաւ, որ այն գործը մինչեւ այն օրը լրմընայ, և ատենակալաց և ուրիշ պէտք եղածներուն տրուի. և օրը օգոստոսի 18 պիտի ըլլար։

Յամանակը քանի կը մօտենար նէ՝ այս տեղեկութիւններս հրատարակուելը չուզողները շատ եղան նակներ մտածեցին. վերջապէս հրատարակումը առնօգուտ ընելու ճամբայ մը գտան. քաղաքական յանցանքով բռնուածներուն ամէնուն յանցանքին ընդհանուր թողութիւն ուզեցին. որպէս զի ամէն կերպ պատժէ ազատ ըլլան։ Թէ որ այս ըլլար նէ՝ ապսուելու տեղեկութիւնները իբր՝ ուրիշ հետաքրքրական պատմութիւն մը գրատուները դրուելէն զատ հետեւութիւն մը չէին ունենար։ Այս խնդրոյս վրայ կառավարութեան ազգային ատեանը պատգամաւորաց մէջ եղած խօսքերէն և վէճերէն նշան առնուեցաւ որ պիտի չդալէ. բանը ուրիշ կերպի դարձուցին։

Խելմը ազգիներ և կնիկներ եղան. առաջ 50 կամ 60 հոգի, եաքը մէկ երկու հարիւր հոգի. եաքը մինչեւ հաղարը անցան. ասոնք ապերասպիր մը հետերնին առնելով խորհրդարանը կ'երթային. և թէ որ ներս մտնէին նէ, պօռալով ճչելով, եղբայրս կ'ուզեմ, աղաս կ'ուզեմ, հայրս կ'ուզեմ, այրս կ'ուզեմ ձայներով խորհրդարանը շփոթ կը ձգէին, բայց պահապան զօրքը որ մայիսի 15 էն ի վեր խորհրդարանին քովերը պակաս չեն. և յունիսի 26 էն եաքը աւելի շատցած են, այս կիները անկէց ցրուեցին։ Յաջորդ օրը և միւս օրն ալ կուգային. բայց խորհրդարանին մէջ աղմուկ չկրցան ձգել։

Այս միջոցիս ձայն մը ալ ելաւ որ խիստ բաղմաթիւ մարդիկ միաբաներ երդումեն ըսեր որ հիմա կուան կառավարութիւը փոխեն, կառավարութենէ գլուխները վար առնեն. իրենց ուզած կերպը հաստատեն և հաւատարմութի ըրած մարդիկներն դնեն։ Կառավարութիւնը որ մէկ երկու անգամ ասանկ բաներ լսելով սորվեցաւ որ ասանկ բան մը լսուի նէ անհոգութիւն ընելու չգար, նոյն հետայն մեծ զգուշութեամբ և աչալրջութեամբ հետաքննութիւններ ըրաւ. մէկ ծայր մը չգտաւ. որով լրագիրներն ալ ըսել սկսան թէ այն լուրը սուտ ելաւ։ Բայց մայիսի 15 էն եաքը՝ որ խռովարարներուն գլխաւորները բանտը դրուեցան, մինչեւ յունիսի 23, քանի մը անգամ ասանկ խօսքեր ելաւ. քանի մը անգամ ալ անհիմն խօսքեր են, հասարակութիւնը վախցընելու համար շինուած սուտ զրուցուածքներ են կ'ըսէին. մինչեւ որ յունիսի 23 ին այն ահագին խռովութիւնը ելաւ։ Ասուած տայ որ ասանկ բան մը ալ այս անգամս չելլէ։

— Ֆռանսայի գործադիր կարողութեան գլուխը Պ. Բաղէնեաք, օգոստոսի 21 ին հրատարակած վճռովմը ջրս հատ օրագիր կը խափանէ, որ են՝ ըբ՝ էլանդան պի՝ բէօբլ, լը բէ՝ պի՝ էլ. լամբիօն, և լը ֆէ՝ էբի՝ պլէ՝ ըսուածները։ Տուած վճռէն կը հասկցուի այս օրագիրներս խափանելուն պատճառը։ Կ'ըսէ որ, յիշեալ օրագիրները պետութեան և ընտանեաց և ընչից տեր ըլլալու դէմ հրատարակած վարդապետութիւններովը, և գրգռութիւն յարուցանելով ընկերութեան դէմ, և ժողովրդեան գերագոյն իշխանութենէն ծագած հրամայական կարողութիւններու դէմ, և զօրաց և ազգային պահապանաց դէմ, և մասնաւոր անձանց դէմ անգամ, թէ որ ասոնք այսպէս ձգուին նէ, քաղաքին մէջ աղմուկ և անկարգութիւն և պատերազմ յարուցանելու բաներ են. և այս օրագիրներս առաւօտէն և շատ անգամ ալ ձրի փողոցներու մէջ կը տրուին, հրապարակները և խանութները և զինուորանոցները անդամ կը բաժնուին, որով չէ թէ աղատութեան, այլ քաղաքական պատերազմի գործիք պիտի ըլլան. անոր համար այս օրագիրները այս օրուընէ խափանուած են։

Այս օրագիրներուս մէկը՝ որ է՝ ըբ՝ էլանդան պի՝ բէօբլ ըսուածը, Պ. Բրուտոնին է. և ասիկայ իր վարդապետութիւնները ազգային ժողովոյ ատեանին մէջը բացատրեց և պաշտպանեց. և Պ. Թիէր թէպէտ դէմ խօսեցաւ, բայց ինչպէս որ երկու կողման խօսածներէն կ'երեւի, Պ. Թիէր չկրցաւ իրեն ընդունած սկզբունքներովը կատարելապէս հերքել. ընդհանուր խօսքերով մերժելը բաւական սեպեց. Պ. Բրուտոն՝ իր հակառակորդին ամէն ըսածին պատասխանը տուաւ։ Այսոր վարդապետութիւններուն վնասակար և հասարակութեան մէջ տիրած բարեկարգութիւնը եղծող ըլլալուն վրայ խօսք չկայ. բայց անհերքելի ըլլալէն կ'երեւի որ՝ Պ. Թիէրին և անոր ընկերներուն ընդունած փիլիսոփայութեան սկզբունքներուն հետեւութիւնները ալ Պ. Բրուտոնին վարդապետութիւններն են. և ասոնց այս վարդապետութիւնը չընդունելը՝ իրենց ընդունած սկզբունքներուն վրայ հաւատարիմ չկենալ է։ Հետեւութիւններուն դէշ ըլլալը հասկցան նէ՝ պէտք է որ սկզբունքները փոխեն։

— Խօսք մը կը պլպտի. որպէս թէ հասարակապետութիւնը վերցընել և թագաւորութիւնը նորէն հաստատել ուզողներ ելեր են. տեղ տեղ խորհուրդ կ'ընեն. կուսակիցներն կը շատցընեն. աղքատ՝ բայց խռովութիւն հանելու վարպետ բանուորներուն ստակ ալ կուտան իրենց կողմը քաշելու համար. և Պօնապարտեան հին տուներէն Պոնապարտի դուքսը թագաւոր ընել կ'ուզեն Հանրի Ե. անուանով։

Ֆռանսայի ֆոնդիէրի-պիոնէլ օրագիրը կ'ըսէ որ այս ձայնը սուտ է. Հանրի Ե.ը կուսակից չունի Ֆռանսա. բայց խելմը խռովասէր մարդիկ քանի կը տեսնեն որ Ֆռանսա խաղաղ կ'երթայ և վստահութիւնը կը տիրէ, ասանկ ձայներ հանելու կ'ըսկսին. որպէս զի նորէն խռովութիւն հանելու առիթ գտանեն. և ասիկայ կարմիր ըսուած հասարակապետականներն են. այսինքն անոնք՝ որ միայն կարմիր գունով դրօշակ կը բանեցընեն։ Տէպա օրագիրն ալ ասոր բաժին հաւանութիւն կուտայ. և այս երկու օրագիր մէկէն մինչեւ հիմայ եղած խռովութիւններուն պարագայներովը ըսածներն կը հաստատեն։

Մայիսի 15 ին՝ խռովարարները լէհերուն ազատութիւնը պատճառ բռնելով ազգային ժողովոյն խորհրդարանը կոխեցին. բայց շատ չանցաւ, լէհերուն խօսքը բոլորովին վերցաւ, կառավարութեան թշնամի ապստամբները պատճառանքը մէկդի ձգեցին. ազգային ժողովոյ անդամները ցրուեցան և

ազգային ժողով չկայ ըսին։

Յունիսի ապստամբութենէն քանի մը օր առաջ՝ Լուի Նաբօլէոնին անունը կը պըտըտէր. անիկայ թագաւոր ուզողներ եկան. եաթը խառվուԹիւն եւ. և այն ապստամբութեան մէջ թագաւոր կ'ուզենք ըսող մարդ մին ալ չի գըտնուեցաւ։

Հիմայ ալ կարգը Հանրի Ե.ին եկած է, բայց աղէկ գիտեմք կ'ըսեն յիշեալ օրագիրները, որ ազգը բաւական վարպետ եղած է. այսպիսի պատճառանքներէ մարդ չխաբուիր։ Բայց մենք ալ չկարծեմք թէ, կ'ուզեն խաբուին, կ'ուզեն չէ, խմորում մը կայ Ֆրանսայի մէջ. Հանրի Ե.ը թագաւոր ուզելին իրաւ է կամ սուտ է, բանը անոր վրայ չէ. խառվուԹիւն մը եղելիքը մօտ կ'երեւի, թէ որ կառավարութիւնը խառվարարներուն զօրաւոր կողմը չգիտնայ և չզսպէ նէ։ Կը յուսայուի որ այս աչալրջութիւնս կ'ընէ կառավարութիւնը, և քանի մը հազար մարդու արիւնի կը խնայէ իր խոհեմութեամբը։

ԻՌԼԱՆՏԱ։ ԽառվուԹիւնը բոլորովին հանդարտեցաւ. կառավարութիւնը խառվարարներուն որը բռնած է և որը բռնելու եռեւէ է. և կ'ըսուի որ Տիւֆֆի խառվարարը բռնեն նէ գլուխը պիտի կարեն։ ԽառվուԹիւնը հանդարտելու շատ մեծ օգուտ ըրին հռոմէադաւան կարգաւորները. ամէն տեղ քարոզելով և յորդորելով ժողովուրդը թէ "Որ հակառակ կայ իշխանութեան, Աստուծոյ հրամանին հակառակ կայ", ինչպէս որ սուրբ գիրքը կ'ըսէ. ուստի պէտք է որ ապստամբներուն հետ միաբանելէն զգուշանան։

Ինկիլիզի կառավարութիւնը լսած ըլլալով որ Ամերիկայի Միացեալ նահանգներէն Իռլանտայի օգնութիւն պիտի գայ և զէնք պիտի բերեն, խատիւ կը պահպանեն կառավարութեան նաւերը Իռլանտայի ամէն կողմի ծովեզերքը. և ամէն տեղի մաքսատուններուն ապրպըրուած է որ՝ հեռաւոր տեղից եկած նաւերուն թէ մարդոցը և թէ բեռներուն մեծ զգուշութեամբ քննութիւն ըլլայ։ Այս հրամանիս վրայ Տօնկարվէն քաղաքը նաւ մը քննելով մէջը 600 տակառ (ֆըչի) վառօդ գտան, և կառավարութեան կողմէն գրաւեցին։

— Ապստամբութիւնը բոլորովին խաղաղցած է. կառավարութիւնը տակաւին խառվարարները բռնելու եռեւէ է։ Բայց առաջիկայ ձմեռուանս մէջ ուրիշ տեսակ խառվութենէ կը վախցուի։ Գեռնախընձորը աւրուած է գրեթէ բոլոր կողոյն մէջ. և յայտնի է որ իռլանտացւոց ապրուստը այս արմատս է։

ԳԵՐՄԱՆԻԱ։ Գերմանական դաշնակցութիւն ընդհանուր ազգային ժողովը՝ Բրուսիայի և Տանիմարքայի մէջ եղած կռիւը վերջացընելու համար հետեւեալ պայմանները կ'առաջարկէ։ Ա. Դաշնակցութեան զօրքերէն գոնէ 4000 հոգի Շլեզվիկու և Հոլշտայնի մէջ մնան. և տանիմարքացիք ալ 3000 հոգի դնեն Ալսէն կղզոյն պահպանութիւն համար։ Բ. Յիշեալ դքսութիւններուն առաջանակ անունով գրուած կառավարութիւնը չի վերնայ, շարունակուի։

— Գերմանական դաշնակցութեան ազգային ժողովին նախագահի փոխանորդը Պ. Տ'անարիան՝ Ֆրանքֆուրդէն ելաւ, արտաքոյ կարգի պատգամաւորութեան գործովմը Փարիզ և Լօնտրա երթալու համար։ Կ'ըսեն որ՝ ժողովքը ասիկայ իրկած է որ՝ գերմանական դաշնակցութեան կողմէն իմացընէ թէ Ֆրանսզիներու և ինկիլիզներու հետ գերմանացիք ալ մէկ են Իտալիայի և Աւսդրիայի մէջ եղած կռիւը վերջացընելու։

Հաշտութեան հաստատութիւնը դժուար բան մը չերեւիր. որովհետեւ Աւսդրիա ալ այս հաշտութիւնը կ'ուզէ։ Ինկիլթէռռա ալնուականայ (լօռտերուն) ժողովքին մէջ Լօռտ Պրուկէմ Իդալիայի գործոց վրայ քանի մը հարցմունք ըրաւ Լօռտ Էնստաուլին։ Ասիկայ պատասխանուցն կարգը այս խօսքս ալ ըսաւ. այն բոպէին որ ինկիլիզներուն միջնորդ ըլլալուն թուղթը Լօնտայէն ճամբայ ելաւ, գիր մը առինք Պ. Վէսէնպուրկէն. և այս գիրս՝ Ռատէցքի Մարշալին ըրած յաղթութենէն ետքը գրուած էր։ Այս գիրս մեր միջնորդութիւնը կը խընդրէր։ Ասկէց աւելի մեծ փորձ կրնայ մի ըլլալ երկու կառավարութեան մէջ եղած բարեկամութեանը. որով Վիէննայի կառավարութիւնը ինկիլիզի տերութեան դիտաւորութեանցը և սկզբանցը և կենցաղական վարմունքին (բօլիդիքային) վրայ մեծ և կատարեալ վստահութիւն ունենալը չի՞ հասկրցըներ մի։

ԱՒՍԴՐԻԱ։ Վիէննա քաղաքը Օտէօն ըսուած տեղը օգոստոսի 15 ին քաղաքացւոց բազմախումբ ժողովք մը ըլլալով, երկու քահանայ. Տ. Բաւլի. Լրսպէրկի եկեղեցւոյն օգնականը, և Տ. Հիրշպէրկ զինուորանոցին քահանայն, իրարու ետեւէ ելան մէկ մէկ ճառ խօսեցան. և անուանի Լոնկի քահանային դրութիւնը պաշտպանեցին, եպիսկոպոսական իշխանութեան դէմ քարոզելով։ Հասարակութիւնը, ինչպէս որ կ'երեւի, բանը աղէկ մը չհասկընալով և միայն այնքանը իմանալով որ իշխանութեան մը դէմէ խօսածնին, ծափ զարկին, հաւանութիւն տուին։

ՄԱՃԱՌԻՍՏԱՆ։ Դըմբշվարէն յուլիսի 25 ին գրուած գիրերը կը ծանուցանեն որ Լադու ըսուած խառուածները մաճառներուն Լուզոն քաղաքը յարձակմամբ չի կրնալով առնել՝ կրակ ձգեցին. որով 240 տուն մոխիր դարձաւ։ Պատերազմի մէջ չորս ուղտինցի մաճառ՝ և 14 Լադու մեռան։ Օգոստոս 1 ին 10,000 ազգային պահապան զօրք եկան Վայսկն. և անկէց ջրի ճամբով խրկուեցան Պայա և Օքանիյա, որ պատերազմի տեղին մօտ են։ Պօռա, որ զինուորական սահմանագլուխ է, խօսք կը պրպտի որ մինչեւ տասն և հինգ օր բոլոր այն սահմանի խառուածները մաճառներուն վրան պիտի ելլեն. և մի և նոյն ժամանակի մէջ ուրթը տեղէն պատերազմ պիտի բանան։

ԲՈՌՈՒՍԻԱ։ Գ՝օլէ՝ հիւանդութիւնը, որ Ասիա և Եւրոպայի արեւելեան կողմերը շատ ջարդ ընելէն ետքը, մանաւանդ Աստրեսան (օդը տաք երկիրներ) և Ռուսսան (ցուրտ երկիրներ) այս կողմերէն քչիկ քչիկ քաշուեցաւ, և հասարակութեան սիրտը ապահովցընելու սկսաւ ալ նէ, հիմայ լրագիրներէն կը տրվիմք որ Եւրոպայի արեւմուտեան երկիրները մտեր է։

Բրուսիայի Պէռլին մայրաքաղաքէն լուր ունիմք որ գ՝օլէ՝ան մէկ սաստկութեամբ մը սկսեր է հոն։ Այս հիւանդութենէս բռնուած 80 հոգիէն 59 հոգին մեռեր է մինչեւ օգոստոս 19։ Ընթայի կողմերը խիստ շատ կոտորած ըրած տեղերն ալ այսքան չէր մեռներ. բռնուողներուն համեմատութեամբ մեռնողները 1/3 մասը, կամ աւելի քիչ կ'ըլլային. Պէռլին նոյն համեմատութեամբ 2/3 մասէն աւելի են մեռնողները. ըսելէ որ հիւանդութեան սաստկութիւնը Ընթայի կողմը տեսնուածին կրկինն է։ Բայց ուրիշ տեղեր ալ տեսնուած է որ սաստկութեամբ սկսած տեղը երկար ատեն չտեւեր. կը յուսացուի որ Եւրոպայի մէջ երկար չկրնար տիրել։

Ուրիշ խառուածութիւն մը ելաւ Պէռլին, օգոստոս 21 ին։ Խառլոդդենպուրկ քաղաքը ռամպէպական ընդերոՒՒ՝ անունով միացած մարդիկ իրենց ժողովելու տեղ և օր յատկացուցեր էին։ Խառլոդդենպուրկի մէջ սոնք շատուոր չեն. սոնց հակառակ կողմը սոնց նշանակած տեղը գացին իրենք բռնեցին. և սոնք ժողվուելու տեղ չունեցան. տներնուն դուրս չելան. բայց խելմը անխելք մարդիկ մէկ մէկ փայտի կտոր առին սոնց տներուն վրայ յարձակեցան. սոնք փախան, խառվարարները եռեւնուն ինկան. ձեռքերնին հասածը կը ծեծէին թող կուտային. մինչեւ քաղաքապահ զօրացը զինուորական պահակերացին (խարաուլին) առաջը անգամ ասիկայ կ'ըլլար։

Ռամպէպականները զիրենք պաշտպանելու ատեն և պատրաստութիւն չունենալով փախչող փախչողի եղան. քանի մը հոգի ալ Պէռլին գացին. և հոն ահանակ չափազանցութեամբ մը բանը մեծցուցին, որ շատ աղմուկ ելլելու սպառնալիք կար. Պէռլինու ռենդերպէն լենպէն ըսուած ազատական ընկերութիւնը նոյն հետայն մէկ տեղ ժողվուեցան, խորհուրդի կեցան։ Բայց աղէկը այն եղաւ որ նոյն օրը Պէռլին քաղաքին մէջ սաստիկ անձրեւ մը եկաւ. անանկ որ՝ դուրս ելլելը դժուար եղաւ։ Ազատականներուն սրտին բարկութեան կրակը այս անձրեւը մարեց. և օգոյն հետ սոնց տաքցած գլուխներն ալ պաղըշկեցան։ Խառլոդդենպուրկի փայտէ կարկուտին հանելու վնասին առաջը՝ Պէռլինու բնակեան անձրեւը առաւ։

Օգոստոս 14 ին, Բրուսիայի թագաւորը և գերմանական կայսերութեան փոխանորդ Յովհաննէս մեծ դուքսը՝ երկուքը մէկէն իրարմէ մէկ քանի ժամ եռք ու առաջ՝ Բէօլն քաղաքը հասան, կրօնական տարեւոր հանդէսի մը համար քաղաքին հռոմէական արքեպիսկոպոսէն և առհասարակ քաղաքացիներէն հրաւիրուելով։ Երկուքը շատ սիրով իրարու հետ տեսնուեցան. և բրուսիացիներուն շատերը մեծ ուրախութիւն զգացին ասով. որովհետեւ Յովհաննէս մեծ դուքսին իբրեւ կայսերութեան փոխանորդ՝ Բրուսիայի իշխանութեան երեւելի քաղաքներուն մէկուն մէջ ներկայանալը, և թագաւորէն ալ անանկ յարգութիւն գտնելը աղէկ նշան և խաղաղութեան առհաւատչեայ բըռնուեցաւ։ Բայց բրուսիացիներուն գերմանական դաշնակցութեան տակը մտնելը չուզող խելմը մարդոց սիրտը նեղացաւ. և յանուանէ՝ Տուսէլտոռֆ քաղաքին բնակիչները, թագաւորը իրենց քաղաքէն անցած ատենը յայտնի ցըցուցին որ պաղած են թագաւորէն։ Ընդ հակառակն, Քինտէն քաղաքէն անցած ատենը քաղաքացիք ալբայական կառքին ձիերը հանել և իրենք կառքը քաշել ուզեցին. թագաւորը կառքէն վար ինչաւ ու ըսաւ, պէտ չըլլար. ամէնքս մէկ տեղ քալելով կ'երթանք։

— Պէռլինու մէջ եղած խառվութիւնը երկարկեկ քըշեց. և մինչեւ օգոստոս 22 ին գիշերը շարունակեցաւ. որովհետեւ անձրեւը անցնելէն ետքը օր անցնելով նորէն ժողվուեցան։ 23 ին Կառավարութիւնը այն բազմութիւնը զէնքի ուժով ցրուելէն և շատ մըն ալ մարդիկ բռնելէն ետքը հրովարտակ մը հրատարակեց. որուն մէջ գլխաւորապէս հետեւեալ կարգադրութիւններս կան։

1. Բազմութիւն ժողվըդեան -բայց տեղ ժողվուիլը Բօլէյիային կողմէն հրման չառած չըլլայ. և այս հրմանս առնելէն 24 ժամ առաջ իմացընելու է ժողվոյն պատճառը։

2. Բազմութիւն մէկէն թափորի պէս փոխցընելը պըրպտիլը արդիլեալ է. կառավարութենէն հրման ըլլալու է։

3. Ի՞նչ բազմութեան ժողվը որ հասարակաց հանգստութիւնը և ապահովութիւնը կը խանգարէ, Բօլէյիան իշխանութիւն ունի այն ժողվքը արգիլել, խափանել և ցրուել։

4. Այս կարգադրութիւններուս դէմ գործողին պատիժն է բանտարկութիւն, մէկ ամիսէն մինչեւ վեց ամիս, յանցանքին ծանրութեանը համեմատ։

ՍՊԱՆԻԱ։ Մաղրըպները Մէլիլա բերդը և Օտաֆէրինա կղզիները Սպանիայի ձեռքէն առնելու համար զօրք հանած են։ Առաջ կը կարծուեր թէ թագաւորը այս բանիս կամք և հաճութիւն չունի. բայց իմացուեցաւ որ կարծիքնին սխալ է եղեր։ Թագաւորը Մէլիլայի կողմը ոչքան կը մտանայ նէ՝ մաղրըպները այնքան կը սրբոտին։ Սպանիայիները իրենց երկիրը և Գպատիւը և դրօշակը պաշտպանելու համար բան մը չեն ըներ կ'ըսէ գ՝ամ՝ Բո՝պէ՝օ ըսուած Սպանիայի օրագիրը։

ՀՌՈՄ։ Աւսդրիացւոց Վէլտէն Մառէշալ զօրապետին առաջնորդութեամբը զօրքը Ֆէռառառա մտնելէն ետքը Պոլոնիա քաղաքն ալ մտնել ուզեցին օգոստոս 8 ին։ Քաղաքացիք դէմ կեցան, աւսդրիացիները ստիպուեցան ետ քաշուելու. Անդանեօլա բլուրը գացին, և անկէց քաղաքին վրայ ռումբ նետելով քանի մի տեղ կրակ ձգեցին։ Պոլոնիացիք դեղացւոց հետ մէկ տեղ բլուրին վրայ յարձակեցան. և անկէց ալ փախցուցին աւսդրիացիները։ Նշ գիտնալով որ աւսդրիացիները հանդարտ պիտի չի կենան, Ֆիռէնցէ նստող ինկիլիզի դեսպանին իմացուցին։ Հռոմայու քահանայապետն ալ, որուն իշխանութեանը տակն է Պոլոնիա, Մանտինի քառտինալը և Քոռսինի և Սիմոնեդդի իշխանները Վէլտէն Մառէշալին խրկեց, որ աւսդրիացւոց զօրքը Հռոմայու իշխանութեան երկիրներէն դուրս հանէ. չէ նէ կը պարտաւորիմ բուռ երկիրներս ազատելու և պաշտպանելու համար պատերազմ հրատարակել։ Ֆրանսայի հասարակապետութենէն ալ օգնութիւն ուզեց աւսդրիացիները Հռոմայու տերութենէն դուրս հանելու։ Աւսդրիացւոց Հռոմայու երկիրները մտնելը՝ Մամիանի անխոհեմ ընթացքին պատուղը կ'երեւի։ Պապին կամացը դէմ Աւսդրիայի հետ պատերազմ կը հրատարակէ. Աւսդրիա ալ Պապը ոչքան իրեն բարեկամ գիտնայ նէ՝ կառավարութիւնը թշնամի ճանչցած է իրեն։

Ֆրանսզի գ՝օնդիդիդ-գ՝օնէլ և գէպա օրագիրները կը գրեն օգոստոս 17 ին, թէ Վիէննայի արքունիքը Վէլտէն Մառէշալին ղրքով Հռոմայու երկիրը կոխելուն հաւանութիւն չէ տուեր, և իմանալուն պէս իսկոյն հրման խրկեր է որ հրմանը հանելուն պէս աւսդրիացի զօրքը Հռոմայու երկիրներէն դուրս ելլեն. և Վէլտէն ինքը Վիէննա դառնայ։

ԻԴԱԼԻԱ։ Ֆրանսզի Դեպէշ օրագիրը կ'ըսէ։ "Կ'ըսեն որ Պապը աւսդրիացի Յովհաննէս մեծ դքսին գրեր է, (որ գերմանական կայսերութեան փոխանորդն է), որպէս զի իր հեղինակութիւնը Վիէննայու արքունեացը վրայ բանեցընէ, որ ինկիլիզի և Ֆրանսզի տերութիւնները ինչ պայմանով կ'ուզեն նէ՝ այն պայմաններով Իտալիան խաղաղցընելու օգնէ"։

— Օգոստոս 11 ին Ֆրանսայի կառավարութիւնը արտաքին գործոց պաշտօնատարը Պ. Պասքիա, և Նաբօլիի տերութեան կողմէն Փարիզ նստող դես-

Ամերիկայի Հայերի Միութեան Կենտրոնական Վարչութիւնը Հանրագրեր է ուղարկեր Միացեալ Նահանգներու Նախագահ Ֆրանկլին Ռուզվելտին, Անգլիոյ Նախարարաց Նախագահ Ուինսթըն Չըրչիլին, Խորհրդային Միութեան Նախագահ Ստալինին, Ֆրանսայի Ազգային Կոմիտէի Նախագահ Դը Գոլլին, Թուրքիոյ Նախագահ Ինոնիին եւ Իսպանիոյ Գլխաւոր Նախարար Գեներալ Ֆրանկոյին։ Հանրագրերը կը կոչուին հանրային կարծիքը՝ Հայերու Ցեղասպանութեան դատապարտելու եւ Հայաստանի Հանրապետութիւնը ճանաչելու։

Հանրագրերուն մէջ ամփոփուած է Հայերու Ցեղասպանութեան պատմութիւնը։ Ամերիկայի Հայերի Միութեան Կենտրոնական Վարչութիւնը կը գրէ, թէ Հայերը Ցեղասպանութեան զոհերն են եղեր

Շ դ օ ք օ լ մ քաղաքին մէջ օգոստոս 7 ին։ Աբիկայ ծ ը ն ած էր Շ ուէտու Լ ինքօրինկ քաղաքը 1779 թուին օգոստոս 29 ին. որով մեռած տեղը կ'ըլլայ 69 տարիէն 22 օր պակաս։

ԱՄԵՐԻԿԱ։ Մէքսիքօյի կառավարութէ զատուած Լուքսադան երկիրը գէշութեան մէջ ինկած էր։ Յունիսի 20 ին անկէց գրուած նամակները կը ծանուցանեն (կ'ըսէ Ֆռանսըզի օրագիր մը), որ երեք օր առաջ այն կողմի վայրենիները շատ մը գարակներու կրակ ձգելով մինչեւ Բամբէշ բերդին մօտեցեր են, 18 ին Բանքաղան քաղաքը առեր են, որ Մէրիտա մայրաքաղաքէն միայն ինն ժամու ճամբայ հեռու է։ Աստնցմով երկիրը տագնապի մէջ ինկած, ծովէն հեռու տեղերուն բնակիչները ծովեղերեայ տեղեր գալ կ'ըստիպուին. ծովեղերքներուն բնակիչներն ալ աչքերնին ուրիշ գաւառ երթալու է։ Շատ չանցնիր, Լուքադանի հարուստ մարդիկ իրենց ընտանեօքը և իրենց հարստութեամբը (որ այս խռովութեանս պատճառաւ շատ պակսած է, և առաջին ատոմիճանը հասնելու յոյս մըն ալ չի կայ), Հաւանա և Ինդիլեան կղզիները և Նուվէլ Օռլէան պիտի անցնին։

Կառավարութիւնը խռովութիւնս դադարեցնելու համար արտաքոյ կարգի ճամբաներ բռնեց։ Խոստացաւ որ՝ վայրենիներէն ով որ ապիտակամարթներուն կամ եւրոպացի ցեղերուն պաշտպանութիւն ընէ նէ՝ անոր պարգեւներ տայ, և ցեղովը աղնուականութեան վկայական շնորհէ. որ այն մարդոց համար զօրաւոր բան մըն է։ Շատերը ասոր հաճեցան. բայց ասով ալ բան մը չեղաւ. որովհետեւ այս նոր պաշտպաններուն տրուելու զէնք չի կայ։ Ասոր ճարը գտնելու համար՝ եկեղեցիներուն մէջ գտնուած մեծագին զարդերուն ցուցակը ուղեցին. որպէս զի այն զարդերը Միացեալ նահանգները խրկեն ծախեն, և տակովը իրենց պէտքը հոգան։ Բայց կասկած կայ որ Լուքադանի սպանիացիները ասով ալ օգուտ մը չի տեսնեն։ Սեւամորթները ինչ քաղաք որ կ'առնեն նէ կ'այրեն, կը փլցնեն. մէջի ինչքերը կը կողոպտեն կ'անցնին կ'երթան. որով ասոնց բանին յաջող երթալը՝ Լուքադանի կառավարութիւնը փոխել չըլլար. բոլոր Լուքադան անբնակ անապատ և աւերակներով լեցուն երկիր մը ընել կ'ըլլայ։

— Լիւրոպայի ամէն ազգ հատարակապետութիւն ուզելու պէս Ամերիկա ալ մտաւ այս ոգին։ Մէքսիքօյի երկրին մէկ կողմը՝ Սիէռա Մատրէի հատարակապետութիւն անուանով Մէքսիքօյէն զատուեցաւ։

Ոամանքա կղզին բնակիչներն ալ՝ որ Ինկիլիզի թագաւորութեան տակն են, անոնք ալ Ինկիլիզի կողմէն դրուած ժողովքը չուզելու ելան. հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգաց հետ կցուիլ կ'ուզեն։

— Մէքսիքօյէն առնուած վերջին լուրերը գէշ չեն։ Կառավարութեան զօրքը Պուսդամէնդէ զօրապետին, հրամանատարութեամբը Բարէտէս ապստամբ զօրապետին դէմ ելեր՝ և կատարեալ յաղթութիւն ըներ է։ Բատրէ Ֆառանդա պատերազմող կրօնաւորն ալ ձեռք ձգեր և գլուխը կտրել տուեր է։

ԱՕԳԱՅԻՆ

Ամէն ժամանակ մէյմէկ տուիթով ազդիս իւրաքանչիւր բարեկարգ դպրոցին արդիւնքը ծանուցանելով մեր արգոյ ընթերցողներուն՝ սրտերնուս անպատում ուրախութեանը սնոնք ալ հաղորդ ընելու ջանք ունեցանք։ Բայց Իւսքիւտարու սուրբ Կարապետի դպրոցը քանի որ բարեկարգութեան մտեր է տեղւոյն աղնուական անձանց սիրաջան ընկերութեան ձեռօքը, անոր վրայով գրելու առիթ մը չունեցանք մինչեւ այս օրս։ Աքքունի շինուածոց համարակալ՝ Ճշմարիտ ազգասէր գերապատիւ Պօղոս աղային ընկերութեանը նախագահ գտնուելովը և յարգի գիտնական պարօն Խաչատուր Պարտիզպանեանին՝ դպրոցին տնօրէն ըլլալովը արդէն գուշակեր էինք որ մէջի աշակերտները՝ թէպէտ և հասակաւ շատերնին չափազանց պզտիկ, քիչ ժամանակի մէջ շատ արդիւնք պիտի ցուցնեն ազգին։ Հիմա խիստ ուրախ եմք որ գուշակութիւնս ճիշդ կատարեցաւ. որովհետեւ ամսոյս 8 ին չորեքշաբթի օրը այն բարեբաղդ դպրոցին փառաւոր քննութեանը ներկայ գտնուող ուսումնականներուն ամէնն ալ վկայեցին որ 13 ամսուան մէջ հայկաբանութենէն ու թուաբանութենէն, 8 ամսուան մէջ գաղղիերէնէն, 6 ամսուան մէջ երկրաչափութենէն և ասոնց պէս քիչ ժամանակի մէջ ալ երաժշտութենէն աշակերտաց սորվածը գովութեան շնորհակալութեան արժանի է ցերեկուան դասդասի մը համար, մանաւանդ այս քննութիւնը առանց սովորական նախապատրաստութեան ըլլալուն վերայիշեալ տնօրէնին և հայկաբանութեան դասատու արգոյ Իւթիւճեան պարօն Կարապետին դէպ 'ի Փարիզ երկուշաբթի օրը մեկնելին հարկ ըլլալով, ինչպէս յարգի պարօն Նիկողոս Օ.օրսյեանը երբոր քննութէ հանդէսին դուռը բացաւ իւր գեղեցիկ տեսնաբանութեամբը քանի մը գլխաւոր տ'ուրիշ պատճառներ մէջ բերելէն ետեւ՝ քննութեանը ընտրեալ պատրաստուելն ալ իմացուցնելով հանդիսականներուն խնդրեց որ ներողամիտ ըլլան թէ որ պակասութիւն մըն ալ տեսանեն. իսկ աշակերտաց տուած օրինաւոր պատասխաններուն մէջ չտեսնուելեցաւ բնաւ անանկ մէկ պակասութիւն մը որ նախատինք բերեր դասատուներուն, այլ ընդհակառակն ամէնուն մաքուր աշխարհաբառ լեզուաւ տրուած ուղիղ պատասխանները տուելցուցին հետաքրքրալ ընտիր դասատուաց յարգը ու պատիւը։

Արգոյ պարօն Կարապետ Իւթիւճեան, դասատու հայկաբանութեան և գաղղիերէնի։

Արգոյ պարօն Պաղարոս Պրիգորեան, դասատու թուաբանութեան և երկրաչափութեան։

Մինչ մինչ երեք կողմ քաղաքը երգեր երգեցին աշակերտները որոնց հեղինակը ըստ շարագրութեան Արգոյ գիտնական պարօն Խաչատուր Աիսաքեանը և ըստ եղանակին Արգոյ պարօն Սիմէոն Մինէճեանը ըլլալուն արժանի դատեցանք այս լուագրովս զանոնք հրատարակելու. նոյնպէս ալ այն փոքրիկ վերջին ճառը որով աշակերտները կը յայտնեն սուրբ սրտերնուն խորին շնորհակալութիւնը իրենց խնամածու աղաներուն, ուսուցիչներուն և հանդիսականներուն։

Քննութեան այն շքեղ տաճարին մէջ երբոր աշակերտները ուրախ կ'ըլլային իրենց իրաւամբ ստացած յաղթութեան պսակին վրայ, յանկարծ արտմութեան փոխուեցաւ անոնց ամէնուն ուրախութիւնը և սրտառուչ տեսարանի փոխակերպեցաւ ատեանը, վասն զի բազմերախտ անօրէնին ելաւ ցաւօք սրտի ու արտասուօք իւր հրաժարական վերջին ողջոյնը տուաւ իւր աշակերտներուն և քանի մը օրէն մայրաքաղաքէս մեկնելին ալ իմաց տալով անոնց՝ յորդորից զանոնք որ անչէջ պահեն սրտերնուն մէջը ուսմամբ երկիւղած քրիստոնեայ՝ ազգասէր հայ ու բարի քաղաքացի ըլլալուն եռանդուն սէրը։

Կը յուսամք որ վերայիշեալ բարեջան ընկերութիւնը՝ դպրոցը այժմեան բարեկարգութենէն ու յառաջադիմութեան ուղիղ ընթացքէն չխոտորելու համար թէ տնօրէնին և թէ հայկաբանութեան դասատուին տեղ արժանաւոր յաջորդներ ընտրելու հոգ կը տանի։

ՆՈՒԱԳ Ա.

Համախրմբեալ բամիցս 'ի տես,
Թէ հրաւիրիմք մեք 'ի հանդէս,
Մանկունք տենչողք փառաց ազգին,
Մի լքանիմք յաստպարիզին.
Չի փոքր է այս յուսոյն որ զմեզ,
Յարծարծանել 'ի բնաւս ըղձանչ,
Ածուխս փոքու տանել միշտ խնամ,
Բարդաւաճել ժամէ 'ի ժամ.
Մեք 'ի սիրոյն ասա պարաւանդ,
Զիմաստութեան տանալ զաւանդ,
Զոր շահէցաքս եկայք ցուցցուք,
Ընտրութեացին ակընկալուք.
Եւ յոր ինչ այլ վարժիմքս յապայն,
Ի դէպ ժամու ցուցցուք և զայն,
Օգնեա մեզ սուրբ Հոգիդ Աստուած,
Ըղձանութեան 'ի յիմացուած։

ՆՈՒԱԳ Բ.

Անգիտաբար մինչեւ անձանց լեալ բաւական,
Սղեալ 'ի ճգունս պարտաւորիչ հարկաւ ուսման,
Ոհ, թէ դառնիք մեզ զառաջինն համարեցան,
Երկեքն քաղցուցեալ վասն հայրենեաց և մեզ պատկան.
Զնոյնդ ախորժ մեզ այժմիկ,
Թըւին քրտունքն աւասիկ,
Մինչ զանաչաւ ունկնդրաց,
Դիտեմք զներոյ հայեցուած,
Զի յասպային 'ի քաջալերք,
Կան անյողդողդ 'ի գթել մեր։
Դատարակք վեհանձունք,
Զթերին մտցմանցըս՝ լցցուք։

ՆՈՒԱԳ Գ. ԵՒ ՎԵՐՋԻՆ

Անմահ աստուած, որ օրհնեա միշտ,
Զայդ և զտերունդ բարեպարիշտ,
Խնամարկողաց վարժոցիս մեր,
Աշժմ և 'ի սպառ հովանի լեր,
Եւ զվաստակողս բնաւ 'ի սրմին,
Ի նրկատեալ ուշ նպատակին,
Ժամանեցս առհասարակ,
Ջերմ 'ի յերկոյս պնաւմատակ։

Մեծարո՝ պեարտ։

Ներեցէք ծառայիդ, որ իմ ո՝ ընկերներս կողմէն՝ սրտերնուս մէջ ունեցած շնորհակալութիւնը յայտնեմ իւր յարգութիւնը։

Մեր բաղդերախտ ուսուցիչները՝ բարոյական իրապնդութեան մէջ մեզի մեզ կը սորվեցընեն որ երախտագիտութիւնը՝ մարդոյ առաքինութենէն ալ պարծանք ըլլալէ առաքինութիւններուն մեկն է։ Դարձեալ մեզի սորվեցուցին, որ հրապարակաւ երդած երախտագիտութիւնը՝ ազնիւ ու բարի ոգւոյ մը յայտնի նշանն է։ Ասոնք մեզի մեծ ալ շատ ուրախ են, որ այսօր՝ սրտերնուս փափաքին համեմատ առիթ ունեցանք երախտագիտութիւնս յայտնելու, ու մանաւանդ հրապարակաւ յայտնելու, որ աւելի գովելի է եղեր։

Մեզի սորվեցուցին, ըսի՝, որ երախտագիտութիւնը բարերարեալ մարդոյ պարտք մըն է. և որովհետեւ մեր էն առջի պարտքերն ալ ասոնց ծառայ է՝ որպէս զի նախ մեր ամենակարող արարչին շնորհակալ ըլլանք, որ մեզի այսպէս բարի գիտուն փնօրէն մը և ուսուցիչներ տուաւ, որ պէտք եղածները անխնայ մեզի կը սորվեցընեն. նմանապէս շնորհակալ եմք այն ամենակարող արարչին, որ մեզի միտ ու շնորհք ալ տուաւ, որ անոնց տուած դասերը մեր կարողութիւնը կէօրէ սորվելու կարողացանք։

Արիւրդ, շնորհակալենք մեծապէս մեր բաղդերախտ հոգեբարյոյ աղայնիրէն, և մանաւանդ մեր ազգասէր գերապատիւ Մելիք-Ադամեանէն, որ գիշեր ցերեկ մեր աղէկութիւնը կը խորհին, ժամանակին ուսպանին կը ծախին, ու ամէն կերպ աշխատութիւնը ու դժուարութիւնը յանձնարարին կ'առնեն որ մեզի ուսման մէջ մեծցնելով, ինչ այս, և երբեք հանդերձեալ աշխարհին համար ունեցած պարտաւորութիւնը ըսպ արծանացոյն կապարեն։

Վերջապէս շնորհակալենք մեր այս հնութիւնան հանդէսին ներկայ գտնուող մեծապատիւ աղաներէդ, որ բարեհաճեցան գալու՝ սորուածներնիս հանդիսանալու, ու անանկով մեր ուսուցիչներուն ու հոգեբարյոյ աղաներուն արդեանցը վայ եղած աղգին ու ծնողներուս առջեւ։

Յիրաւի, կը յուսանք որ հիմակուան վիճակնիս չի ներեր, որ պեսած այսչան բարերարութիւններուն փոխարէն սուտ շնորհակալութիւնք զատ ուրիշ հատուցում մը չենք կրնար ընել. բայց կը յուսանք, որ այս երջանիկ ճամբուն մէջ շարունակելու ընելանք նէ, պեսած բարի օրինակներուն իրապուելով կարող ի'ընելանք օր մը մեզ ալ՝ մեր կարգին յեռվնուս եկած աղկուութիւնը իրօք ազգակիցներուս ընելու։ Ասոնք այն ցանկալի ժամանկին անյիշատակ սպասելով, հոգեբարյոյ Տէրտ, կ'աղաչենք յեր աղնուութիւնը, որ մեր հիմակուան անբաւականութիւնը նեղէք, ու սրտերնուս անկեղծ փափաքը իբր արդիւնք ընդունելով յեր հոգն ու ինամքը վայնուս անպակաս ընէք 'ի փառս և յօգուտ ազգին։

ՕԱՆԱՕԱՆ ԼՈՒՐ

Աշխարհագրութիւն։ Ֆռանսըզի օրագիրները կը պատմեն որ Պայոն քաղաքը և շրջակայ տեղերը սովորութիւն ըրեր են. մէկ էշու մը կռնակ մեծ էշ մը կը դնեն դուռ դուռ կը պըտտին ուտելիք կը ժողվեն և աղքատներուն կը բաժնեն։ Այս պատմութիւնս էյիպցիք կարդան նէ՝ իրենց երբեմն քաղցողներ հանգուցեալ Օ.աքարիա վարդապետը կը յիշեն անշուշտ. որ ասկէց քսան կամ քսան և հինգ և աւելի տարի առաջ՝ ինքը անձամբ՝ մէկ էշ մը հետը, շաբաթը քանի մի օր Լյուպի տուները կը պըտտեր. առտուընէ մինչեւ կէս օր ժողվածը կէս օրէն մինչեւ իրիկուն աղքատներուն կը բաժնէր։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Վալիպէ խանին մէջ գալերէչքիրի ու հինգչքիրի մեղրի պիպի ըլլայ զանազան տուն կահ կարասիներ, բոլորն ալ գեղեցկաձեւ ապիր մահուան փայտէ Լյուրոպայէն եկած։ Այս կահ կարասիներուն մէջի գլխաւոր բաները սառնէ են։ Բառէօլաներ, չանաբէներ, ընդարյակ սեղաններ ու գրասեղաններ, հանդերձի պահարաններ, պրոնոներ, կերպ կերպ խօլնոխլու սանպալներ։ Լայն Լայն։

Գիներուն համար այսչափ մտայն կ'ըսեմ որ՝ ինչ որ անոնց մեկը հոս այնպէս մահուր զինուիլ հնար ըլլար նէ երկու խոմ գնովը հոգէ կ'ըլլար։

ՎԱՐԻՊԱԿՐ

10—115 ԹԻՒ ԼՐԱԳՐԻՆ

ՀՂ	տող	սխալ	ուղիղ
9	86	Սերոլբեան	Սերվերեան
11	70	Դ.ԺԲաղ	Դ.ԺԲաղ դրո-ինենէ։
12	43	Գիր ԺողովԷրեան	Երկիր և կառավարութիւն։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԶՔ ԼՐԱԳՐԻՍ
Յովհ. Պր. Տէր Կրպ. Զամուր։
Մկրտիչ Աղրիոն։
Ի Պոլսի Նոր խան։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄՈՒՀԵՆՏԻՍԵԱՆ